ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ք. Երևան 2026 թվական, հունվարի 23

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ում անունից հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան՝ ում անունից հանդես է գալիս կոնֆեդերացիայի նախագահը, և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը՝ ում անունից հանդես է գալիս միության նախագահը (այսուհետև՝ Կողմեր), համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, կնքում են Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), որով սահմանվում են սոցիալ-աշխատանքային և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական լրացուցիչ երաշխիքներ և Կողմերի համատեղ գործողությունները դրանց իրականացման համար: Կողմերը համագործակցության հիմնական նպատակն են համարում Հայաստանի Հանրապետությունում սոցիալ-աշխատանքային և դրա հետ կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունների

զարգացումը, որը պետք է հիմնված լինի սոցիալական արդարության սկզբունքի վրա և ուղեկցվի մարդկային կապիտալի զարգացմամբ, զբաղվածության մակարդակի բարձրացմամբ, աղքատության կրճատմամբ, աշխատանքային իրավունքների պաշտպանությամբ և արժանապատիվ աշխատանքի ամրապնդմամբ:

Կողմերը համաձայնվում են, որ սոցիալական գործընկերությունը շահերի հավասարակշռման, սոցիալական արդարության ապահովման և խնդիրների լուծման արդյունավետ եղանակների որոշման հիմնական միջոցն է, որի համար Կողմերն իրականացնում են գործողություններ բոլոր մակարդակներում սոցիալական գործընկերության ինստիտուցիոնալ զարգացման և ամրապնդման համար:

Կողմերը համաձայնվում են սույն Պայմանագրում ամրագրված սոցիալական գործընկերության հիմնական նպատակների և առաջնահերթ խնդիրների, ինչպես նաև դրանց լուծման հիմնական ուղղությունների շուրջ:

Կողմերը համաձայնվում են սոցիալ-աշխատանքային լրացուցիչ երաշխիքների իրացման կառուցակարգերը սահմանելիս հաշվի առնել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները և ազգային ծրագրերը, ինչպես նաև եռակողմ փոխհամաձայնությամբ ընդունված որոշումները:

Կողմերը պայմանավորվում են, որ աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող, գործատուների և աշխատողների աշխատանքային, մասնագիտական, սոցիալական, տնտեսական իրավունքներին և շահերին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, բացառությամբ բնակչության կյանքին կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ հրատապ կարգով որոշումների ընդունում պահանջող նախագծերի, Հանրապետական եռակողմ հանձնաժողովի աշխատակարգով սահմանված կարգով ներկայացվում են Հանրապետական եռակողմ հանձնաժողովի կարծիքին՝ մինչև համապատասխան մարմնի կողմից դրանց ընդունումը:

II. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական գործընկերության ամրապնդման նպատակով Կողմերը պարտավորվում են.

2.1. մշակել առաջարկություններ գործատուների միությունների և արհմիությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության կատարելագործման ուղղությամբ՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերի պահանջները.

2.2. աջակցել գործատուների և արհեստակցական միությունների ստեղծմանը և զարգացմանը՝ սոցիալական գործընկերության համակողմանի զարգացման նպատակով.

2.3. ապահովել արհմիությունների և գործատուների ներկայացուցիչների մասնակցությունը մասնագիտական ուսումնական հաստատությունների կառավարման (հոգաբարձուների) խորհուրդներում.

2.4. կազմակերպել հանրային իրազեկման արշավներ և միջոցառումներ սոցիալական գործընկերության վերաբերյալ.

2.5. եռակողմ ձևաչափով ուսուցումներ կազմակերպել կոլեկտիվ աշխատանքային հարաբերությունների վերաբերյալ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության, գործատուների և աշխատողների ներկայացուցիչների մասնակցությամբ.

2.6. ապահովել եռակողմ ձևաչափով Հանրապետական եռակողմ հանձնաժողովի տարեկան գործունեության վերաբերյալ հանրային իրազեկումը.

2.7. նպաստել եռակողմ գործընկերության (ինստիտուտի) կայացմանն ու զարգացմանը.

2.8. աջակցել կոլեկտիվ պայմանագրերի կնքման պրակտիկայի ներդրմանը.

2.9. ապահովել արհմիությունների և գործատուների ներկայացուցիչների մասնակցության հնարավորությունը՝ նախարարներին կից հասարակական խորհուրդներում:

III. ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ

Արժանապատիվ աշխատանքի ապահովման նպատակով կողմերը պարտավորվում են.

3.1. աջակցել անհատական աշխատանքային վեճերի արտադատական լուծման համակարգի ներդրմանը.

3.2. մշակել առաջարկություններ՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության սկզբունքներին համապատասխան նվազագույն աշխատավարձի սահմանման և աշխատանքի վարձատրության քաղաքականության բարելավման ուղղությամբ.

3.3. անցկացնել համատեղ խորհրդակցություններ և մշակել առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում կենսաապահովման նվազագույն բյուջեի կազմը և կառուցվածքը սահմանելու վերաբերյալ.

3.4. ձեռնարկել միջոցներ արժանապատիվ աշխատանքային պայմանների և սոցիալական արդարության հասնելու՝ միջազգայնորեն ընդունված չափանիշների ապահովման համար.

3.5. մշակել առաջարկություններ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատավարձի ինդեքսավորման մեխանիզմների մշակման վերաբերյալ.

3.6. անցկացնել համապատասխան խորհրդակցություններ և մշակել առաջարկություններ՝ գործատուի անվճարունակության դեպքում աշխատանքի վարձատրության իրավունքի պաշտպանության մեխանիզմների վերաբերյալ.

3.7. աջակցել աշխատանքի և աշխատանքի վարձատրության ոլորտում կանանց և տղամարդկանց հավասարության ապահովմանը՝ համարժեք աշխատանքի դիմաց հավասար վարձատրության սկզբունքով.

3.8. աջակցել աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանը՝ աշխատաշուկայի պահանջներին և տնտեսության կայուն զարգացմանը համապատասխան:

IV. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ԵՎ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Բնակչության զբաղվածության խթանման, մարդկային կապիտալի զարգացման նպատակով Կողմերը պարտավորվում են՝

4.1. քայլեր ձեռնարկել ոչ ֆորմալ զբաղվածության կրճատման և ֆորմալ զբաղվածության խթանման ուղղությամբ՝ նպաստելով կայուն տնտեսության զարգացմանը.

4.2. նախաձեռնել օրենսդրական փոփոխություններ պլատֆորմային տնտեսությունում աշխատողների և Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում և կարգով օրինական հիմքերով առանց աշխատանքային պայմանագրի աշխատանքային գործունեություն ծավալող անձանց միավորման ազատության իրավունքն ապահովելու համար.

4.3. աջակցել երիտասարդների, կանանց, սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների աշխատունակ անձանց, գյուղական և սահմանամերձ շրջանների բնակչության և հաշմանդամություն ունեցող անձանց կայուն զբաղվածությանը.

4.4. աջակցել որակավորումների ազգային շրջանակի բնութագրիչների վերանայմանը, ինչպես նաև ոլորտային որակավորումների շրջանակների (ՈՈՇ) մշակմանը.

4.5. աջակցել բարձրագույն և մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտի հաստատությունների կառավարման մարմիններում գործատուների և արհմիությունների ներգրավվածության ընդլայնմանը, ինչպես նաև աշխատանքի վրա հիմնված ուսումնառության (ԱՀՈՒ) խթանմանը.

4.6. աջակցել միգրանտ, փախստական, այդ թվում նաև՝ Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց ինտեգրմանը աշխատաշուկայում,

4.7. աջակցել աշխատողների շարունակական մասնագիտական զարգացման և գործատուների կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումների իրականացմանը՝ աշխատաշուկայի պահանջներից և տնտեսության առաջնահերթություններից ելնելով.

4.8. աջակցել զբաղվածության ոլորտի հետ առնչվող ռազմավարական ծրագրերի և ոլորտի հետ առնչվող ռազմավարական այլ փաստաթղթերի ու քաղաքականությունների շրջանակներում սահմանված նպատակների իրականացմանը՝ գործազրկության և աղքատության նվազեցման, մարդկային կապիտալի զարգացման, աշխատանքի արտադրողականության բարձրացման նպատակով.

4.9. աջակցել զբաղվածության քաղաքականության մշակման և իրագործման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստանձնած բարեփոխումների օրակարգի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններից բխող ուղենիշների իրականացմանը.

4.10. աջակցել զբաղվածության քաղաքականության մշակմանը, իրագործման և արդյունավետության ուսումնասիրության, զբաղվածության ծրագրերի իրականացման նկատմամբ մոնիթորինգի և գնահատման համակարգի շարունակական զարգացման գործընթացներին.

4.11. աջակցել «Սոցիալական աջակցության մասին» օրենքից բխող միջոցառումների իրագործմանը՝ սոցիալական գործընկերների ներգրավմամբ.

4.12. աջակցել աշխատանքի վրա հիմնված ուսումնառության գործընթացում մասնագիտական կրթության և ուսուցման հաստատության և գործատուների միջև սերտ կապի ձևավորմանն ու արդյունավետ համագործակցության զարգացմանը:

V. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Կողմերը պայմանավորվում են փոխադարձ համաձայնության հիման վրա համատեղ մշակել և իրականացնել սոցիալ-աշխատանքային ոլորտի հետ կապված

սոցիալ-տնտեսական հարաբերություններին վերաբերող միջոցառումներ, որոնք միտված կլինեն արդյունավետ և կայուն զբաղվածության խթանմանը, գործազրկության մակարդակի կրճատմանը, սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը, ինչպես նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը հետևյալ ուղղություններով.

5.1. քննարկել և ներկայացնել առաջարկություններ բնակչության առողջության ապահովագրության պետական համակարգի ներդրման վերաբերյալ.

5.2. քննարկել և ներկայացնել առաջարկություններ կենսաթոշակային համակարգի բարելավման ուղղությամբ.

5.3. աջակցել աշխատաշուկայում երիտասարդների և տարեցների զբաղվածության խթանմանը.

5.4. խթանել սկսնակ ձեռնարկատիրական գործունեությունը՝ որպես աղքատության հաղթահարման և զբաղվածության ապահովման կարևորագույն միջոց՝ ուշադրություն հատկացնելով տնտեսության ճյուղերի զարգացմանը և ձեռքի աշխատանքի վրա հիմնված զբաղվածությանը.

5.5. աջակցել փոքր և միջին ձեռնարկատիրության, այդ թվում՝ կանանց, սոցիալապես անապահով ճանաչված ընտանիքների և հաշմանդամություն ունեցող անձանց ձեռնարկատիրության զարգացմանը, ինչպես նաև այս ճանապարհով ինքնազբաղվածության խթանմանը.

5.6. աջակցել գիտելիքահեն նորարարական տնտեսության միջավայրի ձևավորման և աշխատավայրում թվային տեխնոլոգիաների ներդրման գործընթացին, նպաստել պետական ծրագրերով ամրագրված երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունների ու գերակա խնդիրների լուծմանը.

5.7. խթանել կանաչ ձեռնարկատիրությունը, էներգիայի այլընտրանքային աղբյուրների և տեխնոլոգիական ինովացիաների կիրառումը գործատուների շրջանում՝ կանաչ տնտեսության զարգացման և արդար անցման ապահովման նպատակով.

5.8. խթանել զբաղվածությունը բարձր արտադրողականություն ունեցող ոլորտներում՝ մարդկային կապիտալի շարունակական զարգացման ու ձեռներեցության խթանման միջոցով.

5.9. քննարկել և ներկայացնել առաջարկներ ձեռնարկատիրական գործունեության խթանման նպատակով հարկային դաշտի օրենսդրական կարգավորումների բարելավման ուղղությամբ.

5.10. աջակցել օրենսդրական նախաձեռնությունների կարգավորման ազդեցության գնահատման շրջանակներում սոցիալական և տնտեսական ազդեցության գնահատման մեթոդաբանության և գործիքակազմերի լավարկմանը:

VI. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման նպատակով Կողմերը պարտավորվում են.

6.1. աջակցել աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործմանը՝ պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան.

6.2. քննարկել և առաջարկություններ ներկայացնել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի գործառույթներն Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 81 կոնվենցիայի պահանջներին համապատասխանեցնելու վերաբերյալ.

6.3. մշակել առաջարկություններ աշխատանքի վայրում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրության և դժբախտ դեպքերը կանխարգելելու համար ռիսկերի գնահատման արդյունավետ համակարգ ներդնելու ուղղությամբ.

6.4. աջակցել «Բռնության և ոտնձգության մասին» Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 190 կոնվենցիայի վավերացման գործընթացին, խթանել

բռնությունից և ոտնձգություններից զերծ աշխատանքային միջավայրի ձևավորումը, խրախուսել սոցիալական երկխոսությունը Հայաստանի Հանրապետության կառավարության, գործատուների և աշխատողների միջև՝ աշխատավայրում առկա խնդիրների նկատմամբ համագործակցային մոտեցում ցուցաբերելու նպատակով.

6.5. յուրաքանչյուր տարի Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հետ քննարկել աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման վերաբերյալ օրենսդրության կիրառման և վերահսկման ընթացքը, խթանել լավագույն օրինակների տարածումը և, ըստ անհրաժեշտության, մշակել համապատասխան առաջարկներ.

6.6. պարբերաբար քննարկման առարկա դարձնել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաշվետվությունները.

6.7. իրազեկել կազմակերպություններին՝ աշխատողների անվտանգության ապահովման և առողջության պահպանման հանձնաժողովների ստեղծման հարցում.

6.8. աջակցել կազմակերպություններին աշխատանքի պաշտպանության, աշխատավայրում բռնության և ոտնձգության կանխարգելմանն ուղղված քաղաքանության և ընթացակարգերի մշակման ու ներդրման հարցում.

6.9. մասնակցել 6.7-րդ կետի ուղղությամբ իրականացվող միջոցառումների կազմակերպման ուղեցույցի մշակման և վերապատրաստման դասընթացների իրականացման գործընթացին:

VII. ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

7.1. Հանրապետական մակարդակում կոլեկտիվ բանակցությունների վարման, պայմանագրային պարտավորությունների կատարման ապահովման, Պայմանագրի կիրարկումն ապահովելու նպատակով գործողությունների ծրագրի մշակման, Պայմանագրի կատարման ընթացքում ծագած խնդիրների քննարկման և Կողմերին համապատասխան առաջարկների ներկայացման նպատակով, Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 20 աշխատանքային օրվա ժամկետում Կողմերը համաձայնագրով

ձևավորում են Հանրապետական եռակողմ հանձնաժողով (այսուհետև՝ Հանձնաժողով):

7.2. Հանձնաժողովը ձևավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչներից:

7.3. Կողմերից յուրաքանչյուրը Հանձնաժողովում պետք է ունենա 5-ական անդամ:

7.4. Հանձնաժողովի նախագահը փոխվում է տարեկան ռոտացիայի սկզբունքով: Պայմանագրի գործողության երեք տարիների ընթացքում Կողմերից յուրաքանչյուրի ներկայացուցիչը նախագահում է մեկ տարի ժամկետով:

7.5. Հանձնաժողովի նախագահը Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարն է, իսկ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության կողմից՝ համապատասխանաբար ներկայացված ղեկավար անձինք:

7.6. Հանձնաժողովի նախագահի ռոտացիան սահմանվում է հետևյալ հաջորդականությամբ՝

1) 1-ին տարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ ի դեմս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության.

2) 2-րդ տարի՝ Հայաստանի գործատուների հանրապետական միություն.

3) 3-րդ տարի՝ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիա:

7.7. Հանձնաժողովի կողմից կայացված որոշումներն ունեն հավասարազոր ուժ՝ անկախ նախագահող կողմի:

7.8. Կողմերից յուրաքանչյուրի նախագահության ժամանակահատվածում Հանձնաժողովի քարտուղարության աշխատանքներն համակարգում է նախագահող կողմը՝ համագործակցելով մյուս կողմերի պատասխանատու ներկայացուցիչների հետ:

7.9. Հանձնաժողովն ըստ անհրաժեշտության ձևավորում է աշխատանքային խումբ (խմբեր):

7.10. Հանձնաժողովի կազմում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմի ներկայացուցչի փոփոխությունը կատարվում է Հանձնաժողովում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդգրկված համապատասխան պետական մարմնի առաջարկության հիման վրա, իսկ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչների փոփոխությունը՝ համապատասխանաբար նշված կազմակերպությունների կողմից:

7.11. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ պետք է ունենա մշտական փոխարինող:

7.12. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմի ներկայացուցիչ համարվող Հանձնաժողովի անդամը պետք է ներկայացված լինի առնվազն նախարարի տեղակալի, իսկ մշտական փոխարինողը՝ առնվազն նախարարության կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի մակարդակով:

7.13. Հանձնաժողովի կազմի հաստատման հետ միաժամանակ հաստատվում է նաև Հանձնաժողովի անդամներին մշտական փոխարինողների ցանկը:

7.14. Հանձնաժողովը ձևավորման պահից մեկամսյա ժամկետում մշակում և հաստատում է Հանձնաժողովի աշխատակարգը:

7.15. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության, որպես կանոն Հանձնաժողովի նախագահի մոտ, եթե նիստի կայացման տեղի վերաբերյալ Հանձնաժողովն այլ որոշում չի կայացնում:

7.16. Հատուկ դեպքերում Հանձնաժողովի նիստերը կարող են անցկացվել առցանց եղանակով:

7.17. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե յուրաքանչյուր Կողմից մասնակցում են երեքից ոչ պակաս անդամներ:

7.18. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

7.19. Հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում նիստին մասնակցում է նրա մշտական փոխարինողը, որը Հանձնաժողովի անդամին փոխարինման դեպքում ունի նույն լիազորությունները:

7.20. Հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե դրան կողմ են քվեարկել Հանձնաժողովի նիստին մասնակցող յուրաքանչյուր Կողմի երեքից ոչ պակաս անդամներ:

7.21. Հանձնաժողովի կողմից կայացրած որոշումների կատարման ընթացքի մասին պատասխանատու կողմը (ում կողմից որ ենթակա է կատարման կայացված որոշումը) հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետում իրազեկում է կողմերին:

7.22. Արտահերթ նիստ կարող է գումարվել Հանձնաժողովի Կողմերից մեկի՝ առնվազն երեք ներկայացուցիչների գրավոր առաջարկությամբ: Արտահերթ նիստը գումարվում է առաջարկը ներկայացնելուց հետո երկշաբաթյա ժամկետում:

7.23. Հանձնաժողովի աշխատանքների կազմակերպմանը վերաբերող այլ հարցերը սահմանվում են Հանձնաժողովի աշխատակարգում:

7.24. Հանձնաժողովը գործում է Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ողջ ժամանակահատվածում:

VIII. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Հանձնաժողովի նախագահը.

8.1.1. Կազմակերպում է Հանձնաժողովի աշխատանքները.

8.1.2. Ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ հրավիրում և վարում է Հանձնաժողովի հերթական, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, արտահերթ նիստերը.

8.1.3. Ստորագրում է Հանձնաժողովի որոշումները.

8.1.4. Վարչապետին է ուղարկում Հանձնաժողովի որոշումները.

8.1.5. Իր լիազորությունների սահմաններում, Հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, Կողմերի ղեկավարների հետ անցկացնում է խորհրդակցություններ՝ հրատապ կարգով որոշումների ընդունում պահանջող հարցերի վերաբերյալ.

8.1.6. Ապահովում է Հանձնաժողովի գործողությունների և որոշումների հրապարակայնությունը:

8.2. Հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է Կողմերի ղեկավարներից մեկը՝ Կողմերի համաձայնությամբ:

8.3. Անկախ Հանձնաժողովի նախագահ լինելու հանգամանքից՝ կառավարության նիստերում և նախարարական կոմիտեներում իրավական ակտերի նախագծերը ներկայացնելիս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը միաժամանակ ներկայացնում է նաև այդ նախագծերի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացությունը (առկայության դեպքում), եթե այդ իրավական ակտի նախագիծը քննարկվել է Հանձնաժողովում: Հայաստանի գործատուների հանրապետական միության և Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի՝ Հանձնաժողովի անդամ կամ մշտական փոխարինող հանդիսացող ներկայացուցիչները խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նախարարական կոմիտեների նիստերին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի «Կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» N 252-Լ որոշմամբ սահմանված կարգով:

IX. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

9.1. Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում Հանձնաժողովը մշակում և հաստատում է Պայմանագրի կիրարկումն ապահովող գործողությունների ծրագիրը:

9.2. Կողմերը պայմանավորվում են Պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը փոխանցել Հանձնաժողով:

9.3. Պայմանագրի իրականացման ընթացքը լուսաբանելու նպատակով, Հանձնաժողովը և երեք կողմերը զանգվածային լրատվության և տարբեր հարթակների միջոցներով պարբերաբար կարող են հրապարակել Հայաստանի

Հանրապետությունում սոցիալական գործընկերության զարգացման և սոցիալ-աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն:

9.4. Պայմանագրի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացնում է Հանձնաժողովը:

X. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

10.1. Պայմանագրի փոփոխությունը նախաձեռնող Կողմը Հանձնաժողով է ներկայացնում փոփոխությունների վերաբերյալ գրավոր առաջարկ: Համապատասխան առաջարկությունը ստանալուց հետո՝ տաս աշխատանքային օրվա ընթացքում, Հանձնաժողովում սկսվում են բանակցությունները, որոնք պետք է ավարտվեն ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում: Պայմանագրի փոփոխությունների համաձայնեցված նախագիծը Հանձնաժողովը՝ բանակցություններն ավարտելուց հետո, ներկայացնում է Կողմերի հաստատմանը:

10.2. Պայմանագրի տեքստը տեղադրվում է Կողմերի պաշտոնական կայք-էջերում՝ այն ստորագրելուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

10.3. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է երեք տարի ժամկետով:

10.4. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

10.5. Պայմանագրի վաղաժամկետ լուծում կարող է նախաձեռնել Կողմերից յուրաքանչյուրը՝ այդ մասին ոչ ուշ, քան երեք ամիս առաջ գրավոր տեղեկացնելով մյուս երկու Կողմերին՝ նշելով լուծման պատճառները:

10.6. Կողմերը պարտավորվում են Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ սկսել բանակցություններ՝ նոր

Հանրապետական կոլեկտիվ պայմանագիր կնքելու կամ գործող Հանրապետական կոլեկտիվ պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու վերաբերյալ:

10.7. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հարցը քննարկվում է Հանձնաժողովում:

ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար	Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի նախագահ	Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ
Ա. ԹՈՐՈՍՅԱՆ	Է. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ	Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ